Ձեռք տեղս յետոյ գնաց Մօսկով...» (Գրութիւնը նման է Յովակիմ եպսի ձեռքին)։

3. 1714 թ. յուլ. 20 Յովակիմ եպիսկոպոս Հռոմ է. այդ երեւում է մի պայմանից, որ նա կապել էր Առաքել անունով մի հայի հետ, որին մշակ էր վարձել նա Դ. տարով։ Այդ պայմանաթղթի լուսանցքում կայ այսպիսի հետաքրքրական վկայութիւն. "Յովակիմ վարդապետին բերանի վկայութեամբն ես Մադլէոս (?) կնդէ վկայ եմ այս բանի» (Արդեօք կեղծ չէ՞)*։

4. Ոմն Եղիազար 1715 թ. Դեկտ. 7ին գրում է նամակ Յովակիմ եպիսկոպոսին Հռոմ. "Հասցէ Ջուղայեցի Օվնէմ վարդապետին... Հռոմ»։

5. Ոմն Պետրոս դի-Նազարէթ 1717 թ. գրում է նամակ՝ ուղղելով հասցէն Ամստրդամ. "Առ Յովակիմ գերապայծառ եւ երջանիկ Սրբազան Հայր Արհիեպիսկոպոս վաղարշապատոյ»։

6. Թուղթ Յովակիմ եպիսկոպոսի առ Ամենայն Հայոց Հայրապետն (Հաւանականաբար Առտուածատուր կաթողիկոսին՝ 1715—1725 թ.)՝ Հռոմից փախչելուց յետոյ՝ Ճանապարհից։

"Յոգնապատիւ եւ գերահռչակ պատուով... ամենայն Հայոց Հայրապետի Առտուածահէջ Ս. Ա-

---

* Գրեցի իրեն՝ որ քնաւ կեղծ չէ: Ասիկա է Մատթէոս Սարի, Կաթողիկոս Սսոյ եւ յետոյ Պատրիարք Կ.Պոլսոյ Հայոց, որ ի Կ.Պոլիս 1707ի արիւնահեղ հալածանքին՝ իր կաթողիկէ հաւատքին համար Ցաճկաց տէրութեան յանձնուած եւ մահուան դատապարտուած՝ երբ դահճին սուրը գլխուն վրայ բարձրացած էր, ուրացաւ քրիստոնէութիւնը եւ մահմետական դէնն ընդունեցաւ, որով մահուընէ ազատեցաւ. յետոյ փախաւ Հռոմ, ուր կը գտնուէր արդէն 1712ին, գրչաց եւ ընդունուեցաւ դարձեալ կաթողիկէ եկեղեցւոյ մէջ, եւ իբր 1727ին նոմստեղ վախճանեցաւ իր կաթողիկէ հաւատքին մէջ: Յօդուածագիրս: